ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380385
Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am

ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային
տնտեսության պետական կոմիտեի նախագահ
պարոն Ա. Անդրեասյանին

11.05.2012թ.
N 02/2801-12

Ի պատասխան Ձեր 2012 թ. ապրիլի 27-ի
01/06/870-12 թվակիր նամակի

Հարգելի պարոն Անդրեասյան

Կից ներկայացնում ենք «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

Հարգանքով՝ Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Գ. Թադևոսյան հեռ. 380-227

ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

1. Որոշման նախագիծը (այսուհետ՝ նախագիծ) համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Նախագիծը համապատասխանում է հավասար և ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական այլ ակտերի դրույթներին:

3. Նախագծում իրավական այլ ակտերի նորմերի անհարկի կրկնություններ առկա չեն:

4. Իրավական ակտում համապատասխան փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունն առկա է:

5. Նախագծում անհրաժեշտ բոլոր հարցերը կարգավորված են:

6. Նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի ենթակետերով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

7. Օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն: Այսպես՝ նախագծի նախաբանում «կետին» բառն անհրաժեշտ է փոխարինել «մասին» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

8. Նախագիծն անհրաժեշտ է համապատասխանեցնել սույն եզրակացության 7-րդ կետում նշված օրենսդրական տեխնիկայի պահանջներին:

Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝ **Կ. ԽՏՐՅԱՆ**